թշնամոյն որում գերեցաք զինուորս 'ի նմանէ նա հատուցանէ գերողաց, թէ խնայեսցի հարկադրի գերիս իւր մտանել 'ի պաշտօն ծառայութեան հայոց, որում գործի որ հարկաւորեսցի հայոց։

ԳԼՈՒԽ ՅԺԸ.

Ով ոք զինուոր և զօրագլուխ 'ի թշնամեաց հանդիպելով առ զինուոր և կարգաւորս հայոց ձքելով զէնս իւր 'ի յերեսս յերկրի և յանձն արասցէ անձն իւր 'ի գերութիւն նա ազատ լինի 'ի սպանմանէ։

ԳԼՈՒԽ ՅԺԹ.

Հարկաւոր է մեզ տալ յատկապէս պահպանութիւն 'ի ժամանակս պատերազմի ընդ կանայս և դստերացս թշնամեաց որում գործս բոլորովին դժուարին թուին ընդ սովորութեան բարբարոսաց, սովաւ սիրեցեալ պատուեցեալ դացի յազգն հայոց 'ի մէջ թշնամեաց մերոց, և սովաւ հնազանդին նոքայ մեզ հաւատարմաբար։

ԳԼՈՒԽ ՅԻ.

Որում յաշխարհ, քաղաք և բերթօրեայք զի դաշնադրութեամբ ըմբռնեսցուք որում դաշին որ հաստատեալ իցէ պարտ է մեզ կալ և մնալ 'ի վերայ դաշանց անխախտելի։